թյան ելավ գնաց Վրաստանի Թիֆլիս քաղաքը, թերևս դրամները կարողանա հավաքել, որպեսզի պարտքերը վճարելու օգնություն լինի:

Իսկ երբ խանը իմացավ նրա գնալու մասին, վախեցավ, թե միգուցե գնա շահի մոտ և գանգատվի իրենից: Այս պատճառով հրավիրակ ուղարկեց նրան Հաթամ բեկ անունով մեկին: Սա գնաց Թիֆլիս և շատ աղաչանքներով աղերսում էր հետ դառնալ: Իսկ կաթողիկոսը ասում էր՝ ահա ես մեծ պարտքեր ունեմ, եկա այստեղ, գոնե հնար գտնեմ ազատվել, իսկ դու վերադարձիր և ողջույն տուր ինձնից նրան:

Եվ այնտեղ մնալով օրեր, պարտքերից ինչ-որ քիչ մաս վճարեց: Ապա եկավ գնաց ծովեզրը, նստեց նավ և գնաց Բյուզանդիա, այնտեղ էլ պարտքերից փոքր-ինչ վճարեց: Ապա տկարացավ և վախճանվելով հանգյավ ի Տեր այն տարի 1129 (1630) թվի օգստոսի երկուսին: Նրան տարան Ղալաթա քաղաքը ընդհանուր գերեզմանատուն, այն տեղը, որ կոչվում է Բեկօղլի: Երեք տակ աթոռ կանգնեցրին վրան. (գերեզմանը) հրաշքներ ու բժշկություններ է գործում. շատերից մեկը կպատմեմ, որ իմ աչքերով տեսա: Քանզի այն օրը, երբ նրան դրել են տապանը, երկուշաբթի է լինում, ուստի ամեն երկուշաբթի Ղալաթայի քահանաները պատարագ են անում և գնում են հայրապետի գերեզմանը այցելության, որովհետև ժողովուրդը ուխտ է գալիս, օրհնում են գերեզմանը և խաչհամբույր տալիս: Նույնպես նաև ես գնացի այնտեղ և պատարագ անել տվի: Պատարագից հետո Հակոբ անունով մի քահանայի, որ իմ աշակերտն էր, առա և գնացի Սուրբ Հակոբի գերեզմանը և քահանաներին խնդրեցի պաշտամունք կատարել: Մի՝ դիմացը բաց, տաղավար էր շինված նրա գերեզմանի մոտ: Մի խեղճ մարդ բերեց շուրջառը, Ավետարանն ու բուրվառը և խոսում էր թուրքերեն: Ես կարծեցի, թե նա հոռոմ է կամ ասորի և կամ թե հայ, որ հայերեն խոսել չգիտե: Գերեզմանը օրհնելուց հետո դրամ տվի Հակոբ քահանային, որ բաժանի քահանաներին: Մի քանի ստակ էլ տվի խեղճ մարդուն: Նա տարավ (ստակը) տվեց օղու, բերեց տվեց քահանաներին, որ խմեն: Եվ մինչդեռ կամենում էի հարցնել խեղճ մարդու ով և որտեղից լինելը, ահա եկավ մի փառավոր մահմեդական (թուրք) և երեք կին՝ նրա հետ: Խեղճ մարդու համար բերին ձիթապտուղ, քացախ,

յուղով հաց, որ կոչվում էր սիմիթ, խաշած բակլա, սիսեռ, պանիր, պնակով գարեջուր՝ այսինքն բողա, դրեցին տաղավարում, իսկ իրենք բազմաթիվ մոմեր վառեցին գերեզմանի վրա և պատվեցին գերեզմանի շուրջը աղաչելով:

Ես հարցրի Հակոբ քահանային, թե ովքե՞ր են սրանք: Քահանան ասաց՝ սրանք մահմեդականներ են, իսկ փառավոր երիտասարդը աղքատի որդին է. այս մի կինը սրա կինն է, մյուսը՝ սրա հարսն է՝ որդու կինը, երրորդն էլ սրա դուստրն է և մատով ինձ ցույց տվեց (նրանց): Իսկ այս խեղճն առաջին վազիրի մեծ իշխանն էր: Հանկարծակի սա տկարացավ և դարձավ անդամալույծ, ոտքերը կցվեցին ծունկի հետ նստատեղի տակ: Բազմաթիվ բժիշկներ եկան, չկարողացան դրան բուժել: Դրա տունը Ստամբուլ քաղաքի ծովին մերձ է: Մի օր դա տեսնում է, որ բազմաթիվ մարդիկ ու կանայք մտնելով նավը անցնում են ծովի այն կողմը: Հարցնում է դա, թե ո՞ւր են գնում դրանք: Ասում են՝ Պարսկաստանից մի հայր (հոգևորական) է եկել և այստեղ վախճանվել է, սրանք ուխտի են գնում նրա գերեզմանին: Իսկ սա Աստծու ազդումով ասում է՝ այժմ ինձ առեք տարեք նրա գերեզմանը, հույս եմ տածում առ Աստված, որ նրա աղոթքներով կողջանամ և այլևս չեմ հեռանա նրա տապանից: Իր որդուն ստիպեց, որ առնելով դրին նավակ և անցկացրին այս կողմը: Դրին բեռնակրի շալակը և բերին այստեղ: Երբ եկավ աղաչանքով ողոքում* էր: Երբ իջեցրին դրին գերեզմանի մոտ, լալով ասաց՝ փիր Յաղուբ, հուսով ու հավատքով դիմած եկա քեզ մոտ, կամ մահ տուր, կամ բժշկիր ինձ, երկուսից մեկը շնորհիր ինձ: Այս ասաց պաղատանքով և նստատեղով պտտվեց գերեզմանի շուրջը:

Եվ ահա Աստծու ողորմությամբ ոտքերը բացվեցին, ապա ընկավ ծունկերի վրա և դարձյալ շրջեց գերեզմանի բոլորքը և ահա կանգնեց ոտքերի վրա, լաց լինելով աղաչեց: Ապա բռնելով գերեզմանի վերևի քարից և ոտքի վրա շրջեց դարձյալ, և ահա բացվեցին բոլոր հոդվածքները, շրջում էր ուղիղ, ինչպես առաջ էր: Ապա ընկավ տապանի ներքև, այնքան ճակատը զարկեց քարին, մինչև ճակատը այտուցվեց, այտուցը բարձրացավ գլխից վեր: Ահա այն օրից մինչև այսօր դա այստեղից չի հեռանում, գիշեր ու ցերեկ այստեղ է: Շինեց այդ տաղավարը և բնակվում է դրա մեջ, միս չի ու-

*Բնագրում բողոքում էր, կարդում ենք ողոքում էր: